

«Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

*2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեություն	5
2. Պատրաստման հիմունքներ	6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	6
4. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ	12
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12
6. Առևտրային արժեթղթեր	13
7. Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	13
8. Փոխառություններ	14
9. Պարտավորություններ գործընկերների նկատմամբ	14
10. Այլ պարտավորություններ	15
11. Սեփական կապիտալ	15
12. Չուտ տոկոսային եկամուտ	16
13. Պարտքային կորստի գծով հակադարձում/(ծախս)	16
14. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	16
15. Չուտ առևտրային եկամուտ	17
16. Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ	17
17. Անձնակազմի գծով ծախսեր	17
18. Այլ ընդհանուր վարչական ծախսեր	17
19. Շահութահարկի գծով ծախս	18
20. Ռիսկերի կառավարում	19
21. Իրական արժեքի չափում	24
22. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն	25
23. Կապակցված կողմեր	26
24. Ֆինանսական գործունեությունից առաջացած ֆինանսական պարտավորությունների փոփոխություն	26
25. Կապիտալի կառավարում	26
26. Պայմանական պարտավորություններ	27

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Լենդմարկ Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լենդմարկ Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Եթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի Եթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ▶ Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

Նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար

- ▶ Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:
- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված Էական անորոշություն, որը կարող է Էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին վերահսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն



Էրիկ Չայրապետյան

Աուդիտի բաժնի գործընկեր



Դմիտրո Յուրգելևիչ

2024թ. մայիսի 6

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2023թ.	2022թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	1,541,622	1,777,727
Առևտրային արժեթղթեր	6	823,480	787,355
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	7	85,220	808,654
Հիմնական միջոցներ, օգտագործման իրավունքի ձևով			
ակտիվներ և ոչ նյութական ակտիվներ		40,344	41,059
Այլ ակտիվներ		20,155	2,178
		2,510,821	3,416,973
Ընդամենը ակտիվներ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	6	59,636	-
Փոխառություններ	8	627,803	645,811
Պարտավորություններ գործընկերների նկատմամբ	9	282,387	535,097
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		12,825	361,345
Այլ պարտավորություններ	10	70,926	110,201
Հետաձգված հարկային պարտավորություններ	19	29,699	12,213
		1,083,276	1,664,667
Ընդամենը պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	11	436,815	436,815
Զբաղիչված շահույթ		978,730	1,303,491
Սեփական կապիտալի այլ տարրեր	11	12,000	12,000
		1,427,545	1,752,306
Ընդամենը սեփական կապիտալ			
		2,510,821	3,416,973
Ընդամենը սեփակալ կապիտալ և պարտավորություններ			

Ստորագրվել և վավերացվել է Ընկերության Ղեկավարության կողմից՝

Գոռ Գևորգյան   Գործադիր տնօրեն

Իրինա Տեր-Աբրահամյան  Գլխավոր հաշվապահ

2024թ. մայիսի 6

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2023թ.	2022թ.
Տոկոսային եկամուտ	12	102,520	123,501
Տոկոսային ծախս	12	(74,777)	(72,083)
Չուտ տոկոսային եկամուտ		27,743	51,418
Պարտքային կորստի գծով հակադարձում/(ծախս)	13	19,594	(22,259)
Կոմիսիոն վճարների գծով եկամուտներ	14	979,770	724,791
Կոմիսիոն վճարների գծով ծախսեր	14	(595,339)	(1,511,406)
Չուտ առևտրային եկամուտ	15	1,230,285	2,738,415
Արտարժույթային տարբերություններից զուտ օգուտ	16	991,231	72,174
Չուտ օգուտ անտոկոս փոխառությունների սկզբնական ճանաչումից, ապաճանաչումից և փոփոխությունից	8	88,241	68,460
Շահաբաժիններից եկամուտ		267	33,516
Գործառնական վարձակալությունից եկամուտ		1,500	7,583
Այլ եկամուտ		3,493	8,276
Անձնակազմի գծով ծախսեր	17	(692,297)	(437,059)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	18	(188,200)	(142,553)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		1,866,288	1,591,356
Շահութահարկի գծով ծախս	19	(236,549)	(358,043)
Հաշվետու տարվա շահույթ		1,629,739	1,233,313
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ		1,629,739	1,233,313

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	<i>Բաժնետիրական կապիտալ</i>	<i>Սեփական կապիտալի այլ տարրեր</i>	<i>Զբաղիված շահույթ</i>	<i>Ընդամենը</i>
Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	436,815	12,000	101,678	550,493
Հաշվետու տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	1,233,313	1,233,313
Շահաբաժիններ բաժնետերերին (Ծան. 11)	-	-	(31,500)	(31,500)
Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	436,815	12,000	1,303,491	1,752,306
Հաշվետու տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	1,629,739	1,629,739
Շահաբաժիններ բաժնետերերին (Ծան. 11)	-	-	(1,954,500)	(1,954,500)
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	436,815	12,000	978,730	1,427,545

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2023թ.	2022թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		102,070	119,274
Ստացված միջնորդավճարներ		1,064,847	551,295
Վճարված միջնորդավճարներ		(647,990)	(1,454,385)
Իրացված զուտ առևտրային եկամուտ և արժեթղթերի հետ գործարքների իրականացման հետ կապված այլ հոդվածների շարժեր		2,004,864	2,230,719
Արտարժույթով առևտրային գործունեությունից զուտ օգուտ		435,930	597,228
Աշխատակազմի գծով ծախսերի վճարում		(670,476)	(360,524)
Ստացված շահաբաժիններ		267	33,301
Մուտքեր գործառնական վարձակալությունից		1,500	8,649
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսագումարի վճարում		(3,581)	(3,802)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(227,091)	(15,015)
Առևտրային արժեթղթեր		152,200	(395,125)
Չուտ գործառնական գործունեություն նախքան շահութահարկով հարկումը		2,212,540	1,311,615
Վճարված շահութահարկ		(567,583)	(10,904)
Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		1,644,957	1,300,711
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(26,335)	(1,436)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		-	(5,367)
Չուտ դրամական հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում		(26,335)	(6,803)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխառություններից մուտքեր	24	-	392,817
Փոխառությունների մարում	24	-	(385,293)
Վճարված վարձակալության գծով պարտավորություններ	24	(10,571)	(13,273)
Վճարված շահաբաժիններ	11	(1,954,500)	(31,500)
Չուտ դրամական հոսքեր՝ օգտագործված ֆինանսական գործունեությունում		(1,965,071)	(37,249)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		(346,449)	1,256,659
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարեսկզբին		1,777,727	713,209
Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		102,115	(182,986)
Ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	5	8,229	(9,155)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	5	1,541,622	1,777,727

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեություն

ա) Կազմակերպչական կառուցվածք և հիմնական գործունեություն

«Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն: 2019 թվականի մարտի 29-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել է թիվ 16 լիցենզիան, որը Ընկերությանը հնարավորություն է տալիս մատուցել հետևյալ ծառայությունները՝

- ▶ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և փոխանցում,
- ▶ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- ▶ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
- ▶ արժեթղթերով գործարքների կատարում իր անունից և իր հաշվին,
- ▶ արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում,
- ▶ արժեթղթերի փաթեթի կառավարում:

Ի լրումն վերոնշյալ հիմնական ներդրումային ծառայությունների մատուցմանը, Ընկերությունը կարող է մատուցել այլ ոչ հիմնական ծառայություններ՝ նախատեսված իր լիցենզիայով և ՀՀ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով:

«Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ն գտնվում է և իր գործունեությունը ծավալում է միայն Երևանում: Ընկերությունն առայժմ չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Ընկերությունը տրամադրում է տեղեկատվություն իր գործունեության վերաբերյալ ՀՀ Օրենսդրությանը համաձայն՝ հիմնված վստահելիության և պարբերականության սկզբունքների վրա:

Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10, 118 տարածք:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն է՝

Բաժնետեր	2023թ., %	2022թ., %
ԼԵՆԴՄԱՐԿ ՀՈՒԴԻՆԳ ԱՐՄ ՍՊԸ	100.0	100.0
Ընդամենը	100.0	100.0

«Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի անմիջական բաժնետերերն է ԼԵՆԴՄԱՐԿ ՀՈՒԴԻՆԳ ԱՐՄ ՍՊԸ-ն: 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջինիս միակ բաժնետեր և վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Ահարոն Մխիթարյանը:

բ) Գործարար միջավայրը Հայաստանում

Ընկերությունն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք հանդիսանում են զարգացող շուկաներ: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառայած մարտահրավերներին: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության բռնկումը, դրան հաջորդած Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ հրադադարի պայմանավորվածությունը և, հետագայում, Հայաստանի Հանրապետության տարածքում հակամարտության սրումը ավելի են մեծացրել բիզնես միջավայրի անորոշությունը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեություն (շարունակություն)

բ) Գործարար միջավայրը Հայաստանում (շարունակություն)

Ուկրաինայի պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ Ռուսաստանի և Բելառուսի, ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների դեմ հայտարարել են խիստ տնտեսական պատժամիջոցներ: Պատերազմի սկզբից ի վեր ռուսական ռուբլու զգալի անկայունություն է նկատվել արտարժույթների նկատմամբ, ինչպես նաև արձանագրվել է Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի անկում: Պատերազմի հետևանքով տեղի է ունեցել ոչ ռեզիդենտների զգալի ներհոսք և մի շարք ընկերություններ (հատկապես Ռուսաստանից) տեղափոխվել են Հայաստան՝ ինչը դրական նշանակալի դերակատարություն է ունեցել, ընդհանուր առմամբ, Հայաստանի տնտեսության խթանման և մասնավորապես, ներդրումների և ակտիվների կառավարման գործընթացների խթանման հարցում: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը դա կարող է ունենալ Ընկերության բիզնեսի վրա, քանի որ ընդհանուր առմամբ տնտեսության վրա ազդեցության մեծության վերաբերյալ անորոշություն կա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Այսպես գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ թողարկված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

բ) Հափման հիմունքներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ առևտրային արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով:

գ) Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է ՀՀ դրամը, որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Համաձայն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2 ստանդարտների փոփոխությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից, ինչպես բացահայտված է Ծան. 3(ը)-ում, Ընկերությունը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունների իր բացահայտումը: Եական հաշվապահական հաշվառման քաղաքականությունների վերաբերյալ վերանայված տեղեկատվությունը կենտրոնանում է այն փաստի վրա, թե ինչպես է Ընկերությունը կիրառել ՖՀՄՍ-ների պահանջները իր հանգամանքների նկատմամբ և ներառում է հիմնականում այն հոդվածները, որոնց մասով Ընկերությունը ընտրել է հաշվապահական հաշվառման քաղաքականություն ՖՀՄՍ կողմից թույլատրված մեկ կամ մի քանի տարբերակներից, հոդվածներ, որոնք ենթակա են նշանակալի դատողությունների կամ գնահատումների, և բացառում է այն տեղեկատվությունը, որը միայն կրկնօրինակում կամ ամփոփում է ՖՀՄՍ-ների պահանջները, ինչպես նաև ոչ էական հարցերի վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները:

ա) Իրական արժեքի չափում

Ընկերությունը չափում է առևտրային արժեթղթերը և ածանցյալ գործիքները իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ակտիվների և պարտավորությունների համար, որոնք ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են իրական արժեքով շարունակական հիմունքով, Ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղաշարժեր են տեղի ունեցել հիերարխիայի մակարդակների միջև՝ վերագնահատելով դասակարգումը (հիմնվելով ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք նշանակալի են իրական արժեքի գնահատման համար) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

բ) Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային միավորները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2023թ. դեկտեմբերի 31	2022թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ / 1 ԱՄՆ դոլար	404.79	393.57
ՀՀ դրամ / 1 եվրո	447.9	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային միավորների փոխարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում «Արտարժույթային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս)» հոդվածում:

գ) Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես հետագայում ամորտիզացված արժեքով, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ընկերությունը դասակարգում և չափում է իր ածանցյալ գործիքները և առևտրային ֆինանսական գործիքների պորտֆելը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Ընկերությունը կարող է նախորոշել ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն վերացնում կամ էականորեն կրճատում է չափման և ճանաչման անհամապատասխանությունը:

Ընկերության՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են հաճախորդների և գործընկերների նկատմամբ պահանջները և դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր ձեռքբերումները և վաճառքները ճանաչվում են վճարման ամսաթվի դրությամբ: Կանոնավոր ձեռքբերումը և վաճառքը ֆինանսական ակտիվների այն ձեռքբերումները և վաճառքներն են, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը կանոնակարգման կամ շուկայի կողմից սահմանված ժամկետներում:

Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները այնուհետև գնահատվում են կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ կախված ֆինանսական ակտիվների դասակարգումից:

Տոկոսային հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը դրամական միջոցների և դրանց համարժեքների համար, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և ներառված է «Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ» հոդվածում: Այլ տոկոսային հասույթը ներառում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ստացված արժեկտրոնները և ներառվում է «տոկոսային եկամուտ» հոդվածի «այլ տոկոսային եկամուտ»-ում:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքը հանդիսանում է ֆինանսական գործիք կամ այլ պայմանագիր հետևյալ երեք բնութագրերով՝

- ▶ Դրա արժեքը փոփոխվում է կախված տոկոսադրույքից, ֆինանսական գործիքի գնից, ապրանքի գնից, արտարժույթի փոխարժեքից, գների ինդեքսից կամ դրույքից, վարկանիշից կամ վարկային ինդեքսից, այլ փոփոխականից, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այն հատուկ չէ պայմանագրի կողմի համար (այսինքն՝ դրա հիմքում ընկած):
- ▶ Չի պահանջվում նախնական զուտ ներդրում կամ ավելի քիչ նախնական զուտ ներդրում, քան կպահանջվեր պայմանագրերի այլ տեսակների համար, որոնք ակնկալվում է, որ նույն կերպ կարծագանքեն շուկայի գործոնների փոփոխություններին;
- ▶ Այն մարվում է ապագայում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Ընկերությունը ածանցյալ գործիքներով գործարքներ է իրականացնում գործընկերների հետ: Դրանք հիմնականում պարունակում են կարճաժամկետ ֆորվարդային արտարժութային պայմանագրեր: Այսպիսի ֆինանսական գործիքները պահվում են վաճառքի նպատակով և հաշվառվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործառնություններից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Չուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Առևտրային ֆինանսական ակտիվները չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ողջ օգուտը կամ վնասը ճանաչելով շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական ակտիվի մասով ցանկացած շահաբաժին և ներառվում է «զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

Բրոքերային գործունեությամբ պայմանավորված արժեթղթերով գործարքները չեն հաշվառվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները կրում են բրոքերային հաճախորդները:

Արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում են սփոթ փոխարժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Մասնավորապես՝

- ▶ Ամրոտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասում «Արտարժույթային տարբերություններից զուտ օգուտ կամ վնաս» հոդվածում;
- ▶ Հեջային գործիքների մաս չհանդիսացող, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են են շահույթի կամ վնասում «Արտարժույթային տարբերություններից զուտ օգուտ կամ վնաս» հոդվածում; և

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով պահուստները դրամական միջոցների և դրանց համարժեքների և հաճախորդների և գործընկերների նկատմամբ պահանջների մասով:

Ընկերությունը չափում է կորստի գծով պահուստը 12-ամսյա ԱՊԿ համարժեք գումարով փուլ 1-ում գտնվող դրամական միջոցների և դրանց համարժեքների համար և ամբողջ ժամկետում ԱՊԿ փուլ 2-ում գտնվող դրամական միջոցների և դրանց համարժեքների համար:

12-ամսյա ԱՊԿ-ն հանդիսանում է այնպիսի ԱՊԿ մաս, որը հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում կարող է հանգեցնել ֆինանսական գործիքի հավանական դեֆոլտային իրադարձությունների: Այն ֆինանսական գործիքները, որոնք մասով ճանաչվել է 12-ամսյա ԱՊԿ, համարվում են փուլ 1-ում գտնվող ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում ԱՊԿ համարվում է այնպիսի ԱՊԿ, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի ամբողջ ժամանակահատվածում բոլոր հնարավոր դեֆոլտային իրադարձություններից: Այն ֆինանսական գործիքները, որոնք մասով ճանաչվել է ամբողջ ժամկետում ԱՊԿ, համարվում են փուլ 2-ում գտնվող ֆինանսական գործիքներ: Փուլ 2-ում գտնվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչվածից ի վեր պարտքային ռիսկի Նշանակալի աճ գրանցած, բայց պարտքային առումով չարժեզրկված գործիքներ են:

Այն ֆինանսական գործիքները, որոնք մասով ճանաչվել է ամբողջ ժամկետում ԱՊԿ և պարտքային առումով արժեզրկված են, համարվում են փուլ 3-ում գտնվող ֆինանսական գործիքներ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Ֆինանսական ակտիվները, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ, չափվում են որպես բոլոր դրամական պակասուղղների ներկա արժեք (դրամական պակասուղղը պայմանագրին համապատասխան բանկին հասանելիք դրամական հոսքերի և բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է):

Այլ ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը կիրառում է ԱՊԿ հաշվարկի պարզեցված մոտեցում: Հետևաբար, Ընկերությունը չի հետևում պարտքային ռիսկի փոփոխություններին, սակայն ճանաչում է կորուստի գծով պահուստ ամբողջ ժամկետում ԱՊԿ հիման վրա յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Դուրսգրման քաղաքականություն

Ընկերությունը դուրս է գրում ֆինանսական ակտիվը, երբ առկա է տեղեկատվություն այն մասին, որ պարտապանը գտնվում է ծանր ֆինանսական վիճակում և գոյություն չունի վճարման պարտականությունների կատարման իրատեսական հեռանկար, այսինքն, երբ պարտապանը սկսել է լուծարման կամ սնանկացման գործընթացը, կամ, առևտրային դեբիտորական պարտքերի դեպքում, երբ գումարը ժամկետանց է ավելի, քան երկու տարի, կախված այն բանից, թե ինչն է տեղի ունեցել ավելի շուտ: Դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթակա լինել հարկադիր գործողությունների՝ Ընկերության՝ գումարների հավաքագրման ընթացակարգերի շրջանակում՝ հաշվի առնելով, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական խորհրդատվությունը: Ընկերության հարկադիր գործողությունների արդյունքում հավաքագրված գումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված լրացուցիչ և ուղղակիորեն վերագրելի վճարների և գործարքի ծախսումների համար: «Ամորտիզացված արժեքն» այն գումարն է, որով ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման ժամանակ՝ հանած մայր գումարի մարումները, գումարած կամ հանած կուտակային ամորտիզացիան՝ օգտագործելով այդ սկզբնական գումարի և մարման գումարի ցանկացած տարբերության արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն վարկառուի մեկ այլ պարտավորությամբ՝ էապես տարբեր պայմաններով, կամ առկա պարտավորության պայմանները էապես փոփոխվում են, նման փոխանակումը կամ փոփոխությունը դիտարկվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում “Չուտ օգուտ անտոկոս փոխառությունների սկզբնական ճանաչումից, ապաճանաչումից կամ փոփոխությունից” հոդվածում: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, որոնք հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, ներառում են փոխառությունները, գործընկերների նկատմամբ պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը հետագայում ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների համար և ներառվում է “տոկոսային ծախս” հոդվածում:

դ) Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այնքանով, որքանով հավանական է, որ Ընկերությունը կստանա տնտեսական օգուտներ, և հասույթը կարող է արժանահավատորեն չափվել: Եկամուտը ճանաչելուց առաջ պետք է նաև համապատասխանեն ճանաչման հետևյալ հատուկ չափանիշներին՝

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Ֆինանսական ակտիվների համար՝ բացառությամբ պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների, տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի համար: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղջում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

դ) Եկամուտների և ծախսերի ճանաչում (շարունակություն)

Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ կանխավճարի տարբերակները) և ներառվում է ցանկացած միջնորդավճար կամ հավելյալ ծախսեր, որոնք ուղղակիորեն վերագրելի են գործիքին և հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, բայց ոչ ապագա պարտքային կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, եթե Ընկերությունը վերանայում է վճարումների կամ մուտքերի իր գնահատումները՝ ակտիվի կամ պարտավորության պայմանագրային փոփոխության դեպքում:

Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը գրանցվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը զեղչելով մինչև ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքը: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս չի հանդիսանում պարտքային առումով արժեզրկված, Ընկերությունը վերադառնում է տոկոսային եկամուտի հաշվարկին համախառն հիմունքով:

Միջնորդավճարների տեսքով եկամուտ և ծախսեր

Ընկերությունը միջնորդավճարների տեսքով եկամուտ է ստանում իր հաճախորդներին մատուցվող ծառայությունների լայն շրջանակից, հիմնականում բրոքերային և խորհրդատվական ծառայություններից:

Երբ Ընկերությունը ծառայություններ է մատուցում իր հաճախորդներին, հատուցումը ճանաչվում և հաշվարկվում է կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա և, ընդհանուր առմամբ, վճարվում է անմիջապես ծառայության մատուցումից հետո:

Ընկերության միջնորդավճարները այն ծառայություններից, որոնց կատարման պարտավորությունները բավարարվում են ժամանակի ընթացքում, ներառում են գործակալական վճարները, որոնք հաշվարկվում են Ընկերության կողմից գործակալների կողմից հաճախորդներին մատուցված ծառայություններից ստացած սահմանային եկամտի հիման վրա: Հետևաբար, Ընկերության և գործակալների միջև ընդունման ակտեր են ստորագրվում, և գործակալական վճարները, ընդհանուր առմամբ, ճանաչվում են եռամսյակային կտրվածքով: Այլ միջնորդավճարների հետ կապված ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունների ստացման ժամանակ:

Ճահաբաժիններից եկամուտ

Հասույթը ճանաչվում է, երբ հաստատվում է Ընկերության՝ վճարում ստանալու իրավունքը և ներառվում է «Ճահաբաժիններից եկամուտ» հոդվածում:

ե) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են ՀՀ և միջազգային բանկերում, ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայում և քլիրինգային համակարգերում առկա ցախանջ դրամական միջոցները:

զ) Գործառնական հարկեր

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Ընկերության գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ որպես այն ընդհանուր վարչական ծախսերի բաղադրիչ:

է) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը, ընդհանուր առմամբ, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները, մնացորդային արժեքը և մաշվածության մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հաշվի առնելով գնահատման ցանկացած փոփոխության ազդեցությունը հեռանկարային հիմունքով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն (շարունակություն)

Է) Հիմնական միջոցներ (շարունակություն)

Ստորև ներկայացվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նշանակալի տարրերի օգտակար ծառայության գնահատված ժամկետները:

	Տարի
Հաղորդակցության միջոցներ և համակարգիչներ	1-3 տարի
Այլ	8 տարի

ը) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Եականության մասին դատողությունների կիրառում»), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ Եականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «Եական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն Եականության հայեցակարգը՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Այս փոփոխությունները ազդեցություն են ունեցել Ընկերության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա, բայց ոչ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ցանկացած միավորի չափման, ճանաչման կամ ներկայացման վրա:

Այլ նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023 թվականին, Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա Եական ազդեցություն չեն ունեցել:

- ▶ ՀՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր
- ▶ Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ▶ Միջազգային հարկային բարեփոխումներ - Մոտեցում II մոդելի կանոններ - ՀՀՄՍ 12 ստանդարտի փոփոխություններ
- ▶ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

թ) Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Ընկերությունը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն: Ակնկալվում է, որ ստորև փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնելու 2024թ. հունվարի 1-ից, Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա Եական ազդեցություն չեն ունենա:

- ՀՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալությամբ գործարքներում
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՀՀՄՍ 7 ստանդարտներում :

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները՝ հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք խելամիտ են համարվում տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև.

Իրական արժեքի չափումը

Երբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները, որոնք արտացոլված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, չեն կարող ստացվել ակտիվ շուկաներից, դրանք որոշվում են գնահատման տարբեր մեթոդների կիրառմամբ, որոնք ներառում են գնահատման մոդելների օգտագործումը: Այս մոդելների ելակետային տվյալները վերցվում են դիտարկելի շուկաներից, հնարավորության դեպքում, բայց անհնարինության դեպքում, իրական արժեքները սահմանելու համար պահանջվում է գնահատում: Դատողությունները և գնահատումները ներառում են իրացվելիության և մոդելի ելակետային տվյալների հետ կապված նկատառումներ: Իրական արժեքի որոշման վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տես Ծան. 21:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են՝

	2023թ.	2022թ.
Ընթացիկ հաշիվներ ՀՀ և օտարերկրյա բանկերում	1,103,427	486,079
Ընթացիկ հաշիվներ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայում և քլիրինգային համակարգերում	439,121 (926)	1,300,803 (9,155)
Նվազեցում արժեզրկման գծով պահուստ	1,541,622	1,777,727

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները տեղաբաշխվել են փուլ 1 և փուլ 2-ում: Տարվա ընթացքում ակնկալվող պարտքային կորստի (ԱՊԿ) գծով պահուստի փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
ԱՊԿ գծով պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,792	7,363	9,155
ԱՊԿ փոփոխություն	(1,019)	(7,210)	(8,229)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	773	153	926
	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
ԱՊԿ գծով պահուստ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
ԱՊԿ փոփոխություն	1,792	7,363	9,155
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,792	7,363	9,155

Դրամական միջոցների և դրանց համարժեքների պարտքային որակական վերլուծությունը ներկայացված է Ծան. 20 Ռիսկի կառավարում:

(հազար ՀՀ դրամ)

6. Առևտրային արժեթղթեր

Առևտրային արժեթղթերը ներառում են՝

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Կորպորատիվ պարտատոմսեր	300,376	621,915
Կորպորատիվ բաժնետոմսեր	174,858	161,498
Օտարերկրյա պետական պարտատոմսեր	348,246	3,942
Առևտրային արժեթղթեր	823,480	787,355

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, առևտրային արժեթղթերը ներկայացված են ՀՀ թողարկողների կորպորատիվ պարտատոմսերով՝ արտահայտված ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, ՀՀ թողարկողների կորպորատիվ բաժնետոմսերով և Ավստրիայի, Բելգիայի, Ֆինլանդիայի կառավարությունների կողմից թողարկված պետական պարտատոմսերով՝ արտահայտված ՀՀ դրամով (2022թ. դեկտեմբերի 31՝ ՀՀ և Ռուսաստանի թողարկողների կորպորատիվ պարտատոմսերով՝ արտահայտված ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, ԱՄՆ գանձապետական պարտատոմսերով՝ արտահայտված ԱՄՆ դոլարով և կորպորատիվ բաժնետոմսեր՝ արտահայտված ՀՀ դրամով): Առևտրային արժեթղթերը ըստ թողարկող երկրների ներկայացված են ստորև՝

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Հայաստան	475,234	473,844
Ավստրիա	206,148	-
Բելգիա	94,455	-
Ֆինլանդիա	47,643	-
Ռուսաստան	-	309,569
ԱՄՆ	-	3,942
Առևտրային արժեթղթեր	823,480	787,355

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված արժեթղթեր:

2023 թվականին Ընկերությունը իրականացրել է ապագա ժամկետում կատարման ենթակա օտարերկրյա պետական պարտատոմսերի՝ 206,148 հազար դրամ հաստատուն պայմանագրային արժեքով վաճառքի ածանցյալ ֆինանսական գործարքներ (ֆորվարդ): Ածանցյալ պարտավորությունների մնացորդը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 59,636 հազար ՀՀ դրամ և գրանցված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 'Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ' հոդվածում:

7. Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ

Հաճախորդների և գործընկերների նկատմամբ պահանջները ներառում են՝

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Բրոկերային ծառայությունների գծով դեբիտորական պարտք	68,143	166,562
Արժեթղթերի առքուվաճառքի գծով դեբիտորական պարտք	15,195	649,541
Պահանջարկային ծառայությունների գծով դեբիտորական պարտք	3,621	5,655
Նվազեցում արժեզրկման գծով պահուստ	(1,739)	(13,104)
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	85,220	808,654

Հաճախորդների և գործընկերների նկատմամբ պահանջները ոչ տոկոսակիր են: 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթղթերի առքուվաճառքի գծով դեբիտորական պարտքերը հանդիսանում են օտարերկրյա արժեթղթերի վաճառքի գծով բանկից չմարված դեբիտորական պարտք, որը մարվել է տարեվերջից հետո:

Ստորև ներկայացվում է Ընկերության այլ ֆինանսական ակտիվների՝ պարտքային ռիսկին ներկայացվածության մասին տեղեկատվությունը՝

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելի քան 6 ամիս				Ընդամենը
	Ոչ ժամկետանց	Մինչև 3 ամիս ժամկետանց	3-6 ամիս ժամկետանց	ժամկետանց	
Համախառն հաշվեկշռային արժեք	41,215	14,188	14,707	16,849	86,959
Ակնկալվող պարտքային կորուստ	(817)	(278)	(296)	(348)	(1,739)
Չուտ հաշվեկշռային արժեք	40,398	13,910	14,411	16,501	85,220

(հազար ՀՀ դրամ)

7. Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների և գործընկերների նկատմամբ պահանջների մեծ մասը ժամկետանց չեն:

Հաճախորդների և գործընկերների նկատմամբ պահանջների մնացորդները տեղաբաշխվել են փուլ 1 և փուլ 3-ում: Տարվա ընթացքում ԱՊԿ գծով պահուստի փոփոխությունների վերլուծությունը նեկայացված է ստորև՝

	Փուլ 1	Փուլ 3	Ընդամենը
ԱՊԿ գծով պահուստ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	13,099	5	13,104
ԱՊԿ փոփոխություն	(11,360)	(5)	(11,365)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,739	-	1,739

	Փուլ 1	Փուլ 3	Ընդամենը
ԱՊԿ գծով պահուստ 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
ԱՊԿ փոփոխություն	13,099	5	13,104
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,099	5	13,104

8. Փոխառություններ

Փոխառությունները ներառում են՝

	2023թ.	2022թ.
Փոխառություններ երրորդ կողմերից	627,803	645,811
Ընդամենը փոխառություններ	627,803	645,811

2023 և 2022թթ. ընթացքում Ընկերությունը ստացել է անտոկոս փոխառություններ երրորդ կողմերից 700,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով (2022թ.՝ 700,000 դրամ) և 360-օրյա մարման ժամկետով: Փոխառությունները երկարաձգվել են ևս 1 տարով 2023 թվականին, ինչը հանգեցրել է սկզբնական ֆինանսական պարտավորության էական փոփոխության և ապաճանաչման,

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ շուկայականից տարբեր տոկոսադրույքներով տրված վարկերը չափվում են տրամադրման ամսաթվի դրությամբ իրական արժեքով: Իրական արժեքը հավասար է ապագա տոկոսավճարներին և հիմնական պարտքին՝ զեղչված շուկայական տոկոսադրույքով: Փոխառության տրամադրման օրվա դրությամբ համանման ժամկետային փոխառությունների շուկայական տոկոսադրույքները 2022 թվականի համար կազմել են 11.5% (2022թ.՝ 10.9%):

Ընկերությունը ճանաչել է փոխառությունները իրական արժեքով 683,947 հազար ՀՀ դրամի չափով (2022թ.՝ 631,540 հազար ՀՀ դրամ): Արդյունքում, 88,250 հազար ՀՀ դրամ անտոկոս փոխառությունների սկզբնական ճանաչումից զուտ օգուտը ճանաչվել է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում:

2023 և 2022թթ. ընթացքում Ընկերությունը ճանաչել է փոխառությունների գծով տոկոսային ծախսը 70,233 հազար ՀՀ դրամի և 67,356 հազար ՀՀ դրամի չափով, համապատասխանաբար (Ծան. 12):

9. Պարտավորություններ գործընկերների նկատմամբ

Գործընկերների նկատմամբ պարտավորությունները ներառում են՝

	2023թ.	2022թ.
Ֆևաճար արժեթղթերի գծով կրեդիտորական պարտք	269,721	430,338
Գործակալական վճարների գծով կրեդիտորական պարտք	2,965	55,616
Արժեթղթերի վաճառքի համար ստացված կանխավճարներ	9,670	49,143
Այլ պարտավորություններ	31	-
Ընդամենը պարտավորություններ գործընկերների նկատմամբ	282,387	535,097

Նշված գումարները կարճաժամկետ են և հիմնականում մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից անմիջապես հետո:

(հազար ՀՀ դրամ)

10. Այլ պարտավորություններ

Այլ պարտավորությունները ներառում են՝

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Վարձակալության գծով պարտավորություններ	23,975	34,546
Արձակուրդի հաշվեգրում	31,409	9,588
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	55,384	44,134
Շահութահարկից բացի այլ հարկեր	15,542	66,067
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	15,542	66,067
Ընդամենը այլ պարտավորություններ	70,926	110,201

Ստորև աղյուսակը ներկայացնում է վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և շարժը ժամանակաշրջանի ընթացքում՝

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Հունվարի 1-ի դրությամբ	34,546	5,751
Փոփոխություն	-	42,068
Տոկոսի հաշվեգրում	3,581	3,802
Վարձակալության գծով պարտավորությունների մայր գումարի վճարում	(10,571)	(13,273)
Վարձակալության գծով պարտավորությունների մատուցված տոկոսագումար	(3,581)	(3,802)
Պարտավորություններ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	23,975	34,546

Ընկերությունը 2023 թվականին ունեցել է վարձակալության գծով 14,152 հազար ՀՀ դրամի դրամական միջոցների արտահոսք (2022թ.՝ 17,075 հազար ՀՀ դրամ):

11. Սեփական կապիտալ

Թողարկված կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմում է 436,815 հազար ՀՀ դրամ (2022թ.՝ 436,815 հազար ՀՀ դրամ), որը բաղկացած է թողարկված և տեղաբաշխված 5,139 սովորական բաժնետոմսերից (2022թ.՝ 5,139 սովորական բաժնետոմսեր)՝ յուրաքանչյուրը 85,000 ՀՀ դրամ անվանական արժեքով (2022թ.՝ 85,000 ՀՀ դրամ): Սովորական բաժնետոմսերի տերերն իրավունք ունեն շահաբաժին ստանալ և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովին:

Սեփական կապիտալի այլ տարրեր

2020թ. ապրիլի 27-ին Ընկերության հիմնադրի որոշման համաձայն իրականացվել է 12,000 հազար ՀՀ դրամ ներդրում սեփական կապիտալի այլ տարրերում:

Շահաբաժիններ

2023թ. նոյեմբերին կայացած բաժնետերերի ժողովի ժամանակ Ընկերությունը հայտարարել է շահաբաժիններ 1,303,000 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ (253,551 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար) 2022թ. զուտ շահույթի դիմաց: Ի հավելումս, հայտարարվել են միջանկյալ շահաբաժիններ 651 500 հազար ՀՀ դրամ արժողությամբ (121,776 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար)՝ արտացոլելով ֆինանսական արդյունքները 2023թ. հունիսի 30-ին ավարտված առաջին կիսամյակի համար: Շահաբաժինները վճարվել են 2023 թվականին: 2022թ. մայիսի 2-ին կայացած բաժնետերերի ժողովի ժամանակ Ընկերությունը հայտարարել է շահաբաժիններ 31,500 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ (6,130 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար) սովորական բաժնետոմսերի համար 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար: Շահաբաժինները վճարվել են 2022 թվականին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

(հազար ՀՀ դրամ)

12. Չուտ տոկոսային եկամուտ

Չուտ տոկոսային եկամուտը ներառում է՝

	2023թ.	2022թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,234	342
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով	1,234	342
Առևտրային արժեթղթեր	101,286	123,159
Այլ տոկոսային եկամուտ	101,286	123,159
Ընդամենը տոկոսային եկամուտ	102,520	123,501
Տոկոսային ծախս		
Փոխառություններ	70,233	67,356
Տոկոսային ծախս՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով	70,233	67,356
Վարձակալության գծով պարտավորություններ	3,581	3,802
Այլ տոկոսային ծախս	963	925
Տոկոսային ծախս	74,777	72,083
Չուտ տոկոսային եկամուտ	27,743	51,418

13. Պարտքային կորստի գծով հակադարձում/(ծախս)

Ստորև աղյուսակը ներկայացնում է ԱՊԿ գծով ծախսերը ֆինանսական գործիքների համար՝ ճանաչված շուկայի կամ վնասի մասին հաշվետվությունում 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	1,019	7,210	-	8,229
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	7	11,360	-	5	11,365
Ընդամենը պարտքային կորստի գծով հակադարձում		12,379	7,210	5	19,594

Ստորև աղյուսակը ներկայացնում է ԱՊԿ գծով ծախսերը ֆինանսական գործիքների համար՝ ճանաչված շուկայի կամ վնասի մասին հաշվետվությունում 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	(1,792)	(7,363)	-	(9,155)
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	7	(13,099)	-	(5)	(13,104)
Ընդամենը պարտքային կորստի գծով ծախս		(14,891)	(7,363)	(5)	(22,259)

14. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամուտը ներառում է՝

	2023թ.	2022թ.
Բրոքերային ծառայություններ	826,351	702,464
Խորհրդատվական ծառայություններ	125,649	14,978
Դեպոզիտարական ծառայություններ	27,599	6,699
Արժեթղթերի տեղաբաշխում	171	650
Միջնորդավճարների գծով եկամուտ	979,770	724,791
Գործակալական վճարներ	436,136	1,445,249
Միջնորդավճարների գծով այլ ծախս	109,760	57,808
Դեպոզիտարիայի կողմից մատուցված ծառայություններ	49,443	8,349
Միջնորդավճարների գծով ծախս	595,339	1,511,406
Չուտ միջնորդավճարների գծով եկամուտ/(ծախս)	384,431	(786,615)

(հազար ՀՀ դրամ)

14. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ (շարունակություն)

Գործունեության բնականոն ընթացքում Ընկերությունը ներգրավում է արտաքին գործակալների՝ իր ծառայությունները խթանելու և հաճախորդների թիվը ավելացնելու համար: Ընկերությունը վճարում է որոշակի միջնորդավճարներ տվյալ գործակալներին՝ հաճախորդներից ստացված զուտ եկամտի նկատմամբ կիրառվող ֆիքսված տոկոսի հիման վրա:

15. Չուտ առևտրային եկամուտ

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Առևտրային արժեթղթերի առքուվաճառքից զուտ իրացված օգուտ	1,150,923	2,300,276
Առևտրային արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից զուտ օգուտ	128,239	320,143
Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխություններից զուտ (վնաս)/օգուտ	(48,877)	117,996
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	<u>1,230,285</u>	<u>2,738,415</u>

2023 և 2022թթ. ընթացքում Ընկերությունը ճանաչել է առևտրային արժեթղթերի և ածանցյալ գործիքների գծով արտարժույթի վերազնահատումից օգուտ 43,341 հազար ՀՀ դրամի չափով և առևտրային արժեթղթերի և ածանցյալ գործիքների գծով արտարժույթի վերազնահատումից վնաս 239,554 հազար ՀՀ դրամի չափով համապատասխանաբար «Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ» հոդվածում (Ծան. 16):

16. Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Չուտ օգուտ արտարժույթով առևտրային գործունեությունից	435,930	476,292
Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթի փոխարկումից	555,301	(404,118)
Ընդամենը արտարժույթային տարբերություններից զուտ օգուտ	<u>991,231</u>	<u>72,174</u>

«Արտարժույթային փոխարկումից զուտ օգուտ/(կորուստ)» հոդվածում ընդգրկված են առևտրային արժեթղթերի գծով փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտը, ինչը կազմում է 43,341 հազար ՀՀ դրամ (2022թ.՝ արտարժույթի վերազնահատումից վնաս 239,554 հազար ՀՀ դրամի չափով):

17. Անձնակազմի գծով ծախսեր

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են՝

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Աշխատավարձ և պարգևավճար	676,380	432,358
Պարտադիր կենսաթոշակային վճարներ	13,291	3,775
Սոց.վճարներ	2,626	926
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	<u>692,297</u>	<u>437,059</u>

18. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	39,123	27,878
Իրավական և խորհրդատվական	35,545	63,246
Նվիրատվություն	34,475	-
Հաղորդակցություն	25,780	2,952
Ներկայացուցչական ծախսեր	17,011	2,328
Չփոխհատուցվող հարկեր և վճարներ	15,265	11,457
Մաշվածություն և ամորտիզացիա	14,661	15,624
Տերմինալի տեղադրում և թեստավորում	-	12,400
Այլ	6,340	6,668
Ընդամենը	<u>188,200</u>	<u>142,553</u>

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար աուդիտորին վճարվել է 12,000 հազար ՀՀ դրամ (2022թ.՝ 15,000 հազար ՀՀ դրամ): 2023 թվականին Ընկերությանը արտաքին աուդիտորի կողմից ոչ աուդիտորական ծառայություններ չեն մատուցվել:

(հազար ՀՀ դրամ)

19. Շահութահարկի գծով ծախս

Ընկերության շահութահարկի գծով ծախսերի հիմնական բաղադրիչներն են՝

	2023թ. Հազար դրամ	2022թ. Հազար դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	219,063	364,764
Հետաձգված հարկ – ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	17,486	(6,721)
Շահութահարկի գծով ծախս	236,549	358,043

ՀՀ շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2022թ.՝ 18%)։ ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև։ Հետաձգված հարկը հաշվարկվում է՝ կիրառելով 18% հիմնական դրույքաչափը։

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է օրենքով սահմանված շահութահարկի դրույքաչափերից։ Օրենքով սահմանված դրույքաչափերի վրա հիմնված շահութահարկի ծախսերի համադրումը փաստացի դրույքաչափերի հետ հետևյալն է՝

	2023թ. Հազար դրամ	2022թ. Հազար դրամ
Շահույթը՝ մինչև շահութահարկով հարկումը	1,866,288	1,591,356
Շահութահարկի դրույքաչափ՝ 18%	335,932	286,444
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	(100,091)	(6,032)
Չնվազեցվող ծախսեր	708	77,631
Շահութահարկի գծով ծախս	236,549	358,043

2023 թվականին չհարկվող եկամուտները և 2022 թվականին չնվազեցվող ծախսերը հիմնականում ներկայացված են արտարժույթի փոխարժեքային տարբերություններով։

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ղեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար հետևյալն է՝

	2022թ. հունվարի 1	Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	2022թ. դեկտեմբերի 31	Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	2023թ. դեկտեմբերի 31
Վարձակալության գծով պարտավորություններ	1,047	5,171	6,218	(1,903)	4,315
Ածանցյալ պարտավորություններ				10,734	10,734
Ֆինանսական ակտիվների գծով ԱԴԿ պահուստ	-	4,006	4,006	(3,527)	479
Արձակուրդի պահուստ	467	1,259	1,726	3,884	5,610
Հետաձգված հարկային ակտիվ	1,514	10,436	11,950	9,188	21,138
Հիմնական միջոցներ	(19)	7	(12)	5	(7)
Փոխառություններ	(9,555)	(199)	(9,754)	(3,241)	(12,995)
Առևտրային արժեթղթեր	(9,959)	1,346	(8,613)	(25,962)	(34,575)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(915)	(4,869)	(5,784)	2,524	(3,260)
Հետաձգված հարկային պարտավորություն	(20,448)	(3,715)	(24,163)	(26,674)	(50,837)
Չուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	(18,934)	6,721	(12,213)	(17,486)	(29,699)

(հազար ՀՀ դրամ)

20. Ռիսկերի կառավարում

Ընդհանուր նկարագրություն

Ռիսկերի կառավարումը կարևորագույն դեր է խաղում Ընկերության գործունեության համար և հանդիսանում է որոշիչ բաղադրիչ Ընկերության գործառնական գործունեության համար: Ընկերության գործունեությանը բնորոշ են մի շարք ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը:

ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն փորձն արտացոլելու նպատակով:

Բաժնետերերը պատասխանատու են ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացմանն ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Ընկերության գործունեության իրականացումն ապահովելու համար:

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն բաժնետերերին:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության ներսում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկերը կառավարելու նպատակով (և՛ ճանաչված ֆինանսական ակտիվների, և՛ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար):

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը սովորաբար արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հավանական պարտքային ռիսկերի նվազեցման նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր զուտանցման ազդեցությունը նշանակալի չի:

Վարկային որակը ըստ ֆինանսական ակտիվների դասի

Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Ընկերության կողմից՝ հիմք ընդունելով արտաքին վարկանշային համակարգ, առկայության դեպքում: Չվարկանշված ռիսկերը դասակարգվում են «Ստանդարտ դաս»-ում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք արժեզրկված են:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	Ծան.	Փուլ	Ստանդարտ դաս		Ստանդարտ ից ցածր դաս		Արժեզրկված	Ընդամենը
			Քարծր դաս	դաս	դաս	Արժեզրկված		
Դրամային միջոցներ և դրանց համարժեքներ	5	Փուլ 1 Փուլ 2	429,095 -	1,101,743 -	- 10,784	- -	1,530,838 10,784	
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	7	Փուլ 1	-	85,220	-	-	85,220	
Ընդամենը			429,095	1,186,963	10,784	-	1,626,842	

(հազար ՀՀ դրամ)

20. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

բ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	Ծան.	Ստանդարտ Ստանդարտ				Ընդամենը
		Բարձր դաս	դաս	ից ցածր դաս	Արժեզրկված	
Դրամային միջոցներ և դրանց համարժեքներ	5	Փուլ 1 Փուլ 2	1,692,578 -	- -	- 85,149	1,692,578 85,149
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	7	Փուլ 1 Փուլ 3	- -	808,429 -	- 225	808,429 225
Ընդամենը			1,692,578	808,429	85,149	2,586,381

Ստորև աղյուսակը ներկայացնում է Ընկերության վարկանշային համակարգը և արտաքին վարկանշման մանրամասները 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Moody's միջազգային վարկանիշային գործակալության վարկանիշ	Ներքին վարկանշման նկարագրություն	ԴՅ
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.06%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.1-4.52%
Caa1-ից Ca	Ստանդարտից ցածր դաս	6.93-33.62%
D և ավելի ցածր վարկանիշ	Արժեզրկված	100%

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Moody's միջազգային վարկանիշային գործակալության վարկանիշ	Ներքին վարկանշման նկարագրություն	ԴՅ
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.06%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.1-4.6%
Caa1-ից Ca	Ստանդարտից ցածր դաս	7.06-32.58%
D և ավելի ցածր վարկանիշ	Արժեզրկված	100%

Իրացվելիության ռիսկ և համապատասխան կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Ընկերությունը ձգտում է պահպանել իրացվելիության կառավարումը՝ դրամական միջոցների հոսքերի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

(հազար ՀՀ դրամ)

20. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

բ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Ստորև աղյուսակը ներկայացնում է Ընկերության ֆինանսական պարտավորությունների ժամկետայնությունը՝ հիմնված պայմանագրային չգեղջված մարման պարտավորությունների վրա:

2023թ. դեկտեմբերի 31					
Ցպահանջ և միջև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը	
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ գործընկերների նկատմամբ	282,387	-	-	-	282,387
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	31,409	-	-	31,409
Ածանցյալ պարտավորություններ	59,636	-	-	-	59,636
Վարձակալության գծով պարտավորություններ	4,243	19,959	1,465	-	25,667
Փոխառություններ	-	700,000	-	-	700,000
Ընդամենը չգեղջված ֆինանսական պարտավորություններ	346,266	751,368	1,465	-	1,099,099
Ածանցյալ գործիքներից համախառն ներհոսք	(146,512)	-	-	-	(146,512)
Ածանցյալ գործիքներից համախառն արտահոսք	206,148	-	-	-	206,148
Ընդամենը չգեղջված ֆինանսական պարտավորություններ, ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները	405,902	751,368	1,465	-	1,158,735
2022թ. դեկտեմբերի 31					
Ցպահանջ և միջև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը	
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ գործընկերների նկատմամբ	535,097	-	-	-	535,097
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	9,588	-	-	9,588
Վարձակալության գծով պարտավորություններ	4,243	12,729	17,704	-	34,676
Փոխառություններ	-	700,000	-	-	700,000
Ընդամենը չգեղջված ֆինանսական պարտավորություններ	539,340	722,317	17,704	-	1,279,361

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կուտակային դրամական միջոցների մնացորդը կազմում է 1,541,622 հազար ՀՀ դրամ, ինչը բավարար է իր չմարված ֆինանսական պարտավորությունների մասով դրամական միջոցների ամբողջական արտահոսքը ծածկելու համար:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և վերահսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունը կառավարում է իր շուկայական ռիսկը՝ հեջավորելով դիրքերը: Ստորև աղյուսակը ներկայացնում է Ընկերության հիմնական պարտքային ռիսկերը իրենց հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական տարածքների 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազար ՀՀ դրամ)

20. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

	2023թ. դեկտեմբերի 31			
	Հայաստան	Ռուսաստան	Այլ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,101,741	10,785	429,096	1,541,622
Առևտրային արժեթղթեր	475,233	-	348,247	823,480
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	7,408	45,866	31,946	85,220
	1,584,382	56,651	809,289	2,450,322
Պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	59,636	-	59,636
Պարտավորություններ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	1,440	263,664	17,283	282,387
	1,440	263,664	17,283	282,387
Չուստ ակտիվներ	1,582,942	(207,013)	792,006	2,167,935
	2022թ. դեկտեմբերի 31			
	Հայաստան	Ռուսաստան	Այլ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,186,335	85,149	506,243	1,777,727
Առևտրային արժեթղթեր	473,844	309,569	3,942	787,355
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	6,504	93,748	708,402	808,654
	1,666,683	488,466	1,218,587	3,373,736
Պարտավորություններ				
Պարտավորություններ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	3,863	47,559	483,675	535,097
	3,863	47,559	483,675	535,097
Չուստ ակտիվներ	1,662,820	440,907	734,912	2,838,639

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Այլ երկրներն են՝ Ավստրիան, Ֆինլանդիան, Բելգիան, Կիպրոսը, Միացյալ Թագավորությունը և ԱՄՆ:

Գնային ռիսկեր

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ բաժնային գործիքներ, որոնք գնանշված չէին ակտիվ շուկայում: 2023 և 2022 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսերի գնանշված գների 20% աճը (20% նվազում) կհանգեցնի 34,972 հազար դրամ շահույթի (վնասի) ճանաչման եկամուտների և ծախսերի հաշվետվությունում (2022 թ.՝ համապատասխանաբար 32,300 հազար դրամ շահույթ (վնաս)):

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքի փոփոխությունները ազդեցություն կունենան ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի վրա: Ստորև աղյուսակը ներկայացնում է զգայունությունը (հաշվարկն իրականացվել է գործիքների տևողության հիման վրա) տոկոսադրույքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ, մյուս բոլոր փոփոխականները պահպանում են կայունությունը:

Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2023թ. դեկտեմբերի 31	Վերագնահատում ից օգուտի/վնասի զգայունություն 2023թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ	1.00%	(10,878)
ԱՄՆ դոլար	1.00%	(4,088)
Եվրո	1.00%	(29,404)

(հազար ՀՀ դրամ)

20. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ճուշտության ռիսկ (շարունակություն)

Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2023թ. դեկտեմբերի 31	Վերագնահատում ից օգուտի/վնասի զգայունություն 2023թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ	4.18%	10,878
ԱՄՆ դոլար	3.17%	4,088
Եվրո	3.16%	29,404

Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2022թ. դեկտեմբերի 31	Վերագնահատում ից օգուտի/վնասի զգայունություն 2022թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ	3.18%	(38,051)
ԱՄՆ դոլար	2.18%	(40,706)
Եվրո	1.36%	(6,641)

Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2022թ. դեկտեմբերի 31	Վերագնահատում ից օգուտի/վնասի զգայունություն 2022թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ	3.18%	38,051
ԱՄՆ դոլար	2.18%	40,706
Եվրո	1.36%	6,641

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթային ռիսկն այն ռիսկն է, երբ ակտիվի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոփոխության փոփոխության արդյունքում: Ստորև աղյուսակը ներկայացնում է այն արժույթները, որոնց մասով Ընկերությունը ենթարկվում է ռիսկի 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իր դրամային ակտիվների և պարտավորությունների և կանխատեսվող դրամական հոսքերի գծով: Այս վերլուծությունը հաշվարկում է ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոփոխության ողջամտորեն հնարավոր շարժի ազդեցությունը, շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում այլ փոփոխականների հաստատուն մնայլու դեպքում:

Բացասական գումարն արտացոլում է հավանական զուտ նվազումը շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, իսկ դրական գումարը՝ հավանական զուտ աճը:

Հազար ՀՀ դրամ	Արտարժույթի փոփոխության փոփոխություն % 2023թ.	Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2023թ.	Արտարժույթի փոփոխության % 2022թ.	Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2022թ.
Արժույթ				
Եվրո	32.9%	148,609	21.3%	200,122
	-32.9%	(148,609)	-21.3%	(200,122)
ԱՄՆ դոլար	22.47%	326,668	12.6%	136,140
	-22.47%	(327,668)	-12.6%	(136,140)
Ռուբլի	49.05%	(118,834)	18.6%	25,682
	-49.05%	118,834	-18.6%	(25,682)

(հազար ՀՀ դրամ)

20. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ, իրավական հետևանքներ կամ հանգեցնել ֆինանսական վնասների: Ընկերությունը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան արձագանքի միջոցով Ընկերությունը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ տարանջատում, մուտքի թույլտվության, համադրման և հաստատման գործընթացներ, աշխատակազմի վերապատրաստում և գնահատում, այդ թվում՝ ներքին աուդիտ:

21. Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթացներ

Ընկերությունը տրամադրում է ակտիվների և պարտավորությունների վերլուծություն, որոնք սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով, և խմբավորվում են առաջինից մինչև երրորդ մակարդակներում՝ հիմք ընդունելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանը:

- ▶ 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- ▶ 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- ▶ 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար Էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Դեկավարությունը կարծում է, որ դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների և գործընկերների նկատմամբ պահանջների, գործընկերների նկատմամբ պարտավորությունների, փոխառությունների և այլ ընթացիկ պարտավորությունների իրական արժեքները մոտ են իրենց հաշվեկշռային արժեքներին՝ պայմանավորված հիմնականում այս գործիքների մարման ժամկետների կարճաժամկետ բնույթից:

Իրական արժեքի հիերարխիա

Իրական արժեքի բացահայտման նպատակով Ընկերությունը սահմանել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ ելնելով ակտիվի կամ պարտավորության բնույթից, բնութագրերից և ռիսկերից, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի մակարդակից, ինչպես նկարագրված է վերևում:

	<i>Իրական արժեքի չափում՝ կիրառելով</i>			<i>Ընդամենը</i>
	<i>Ակտիվ շուկայում գնանշված գներ</i>	<i>Նշանակալի դիտարկելի ելակետային տվյալներ</i>	<i>Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ</i>	
<i>2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>(Մակարդակ 1)</i>	<i>(Մակարդակ 2)</i>	<i>(Մակարդակ 3)</i>	
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ՝				
- Առևտրային արժեթղթեր	348,246	475,234	-	823,480
- Աճանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	59,636	-	59,636

	<i>Իրական արժեքի չափում՝ կիրառելով</i>			<i>Ընդամենը</i>
	<i>Ակտիվ շուկայում գնանշված գներ</i>	<i>Նշանակալի դիտարկելի ելակետային տվյալներ</i>	<i>Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ</i>	
<i>2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>(Մակարդակ 1)</i>	<i>(Մակարդակ 2)</i>	<i>(Մակարդակ 3)</i>	
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ՝				
- Առևտրային արժեթղթեր	477,786	309,569	-	787,355

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օտարերկրյա պետական պարտատոմսերը դասակարգվել են իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 1-ում, քանի որ դրանք չափվում են ակտիվ շուկայում գնանշված գներով:

(հազար ՀՀ դրամ)

21. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասակարգվել են իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում, քանի որ դրանք չափվում են՝ կիառելով Նշանակալի դիտարկելի ելակետային տվյալներ և չեն կարող վաճառվել ակտիվ շուկայում:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները ցպահանջ են և չափվում էին որպես գործընկերոջից ստացվելիք և վճարման ենթակա գումարների տարբերություն:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում թողարկված կորպորատիվ արժեթղթերը դասակարգվել են իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում, քանի որ դրանք չափվում են ոչ ակտիվ շուկայում գնանշված գներով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գնանշված գների վրա, բացառությամբ ռուսական ընկերությունների կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերի (Մակարդակ 2), որոնք հաշվառվում են գնման արժեքով: Դեկավարությունը կարծում է, որ այս պարտատոմսերի իրական արժեքը մոտարկում է գնման գին:

22. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն

Ստորև աղյուսակը ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը, կախված ակնկալվող փոխհատուցումից կամ մարումից: Ընկերության պայմանագրային չզեղչված մարումների պարտավորությունները ներկայացված են Ծան. 20-ում. Ռիսկերի կառավարում:

	2023թ.			2022թ.		
	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան մեկ տարի	Ընդամենը	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան մեկ տարի	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,541,622	-	1,541,622	1,777,727	-	1,777,727
Առևտրային արժեթղթեր	823,480	-	823,480	787,355	-	787,355
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	40,344	40,344	-	41,059	41,059
Պահանջներ հաճախորդների և գործընկերների նկատմամբ	85,220	-	85,220	808,654	-	808,654
Այլ ակտիվներ	20,155	-	20,155	2,178	-	2,178
Ընդամենը	2,470,477	40,344	2,510,821	3,375,914	41,059	3,416,973
Փոխառություններ	627,803	-	627,803	645,811	-	645,811
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	59,636	-	59,636	-	-	-
Ընթացիկ շահույթահարկի գծով պարտավորություններ	12,825	-	12,825	361,345	-	361,345
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	29,699	29,699	-	12,213	12,213
Պարտավորություններ գործընկերների նկատմամբ	282,387	-	282,387	535,097	-	535,097
Այլ պարտավորություններ	46,950	23,976	70,926	75,655	34,546	110,201
Ընդամենը	1,029,601	53,675	1,083,276	1,617,908	46,759	1,664,667
Չուս	1,440,876	(13,331)	1,427,545	1,758,006	(5,700)	1,752,306

(հազար ՀՀ դրամ)

23. Կապակցված կողմեր

ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Կապված կողմի հետ յուրաքանչյուր հնարավոր հարաբերությունն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերությունների էությանը, ոչ միայն դրանց իրավական ձևին:

Կապակցված կողմերը կարող են իրականացնել այնպիսի գործարքներ, որոնք չեն կարող կատարել չկապակցված կողմերը, և կապակցված կողմերի միջև գործարքների պայմանները, ժամկետները և գումարները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի միջև գործարքների պայմաններից: Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը կազմել է՝

	<u>2023թ.</u>	<u>2022թ.</u>
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմի կարճաժամկետ վարձատրություն	188,494	80,181

24. Ֆինանսական գործունեությունից առաջացած ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

	<u>Ծան.</u>	<u>Փոխառություններ</u>	<u>Վարձակալության գծով պարտավորություններ</u>	<u>Ընդամենը պարտավորություններ ֆինանսական գործունեությունից</u>
Հաշվեկշռային արժեք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8, 10	646,915	5,751	652,666
Մուտքեր թողարկումից		392,817	-	392,817
Մարում		(385,293)	(17,075)	(402,368)
Արտարժույթային վերագնահատում		(7,524)	-	(7,524)
Փոփոխություն		-	42,068	42,068
Չուտ օգուտ անտոկոս փոխառությունների սկզբնական ճանաչումից		(68,460)	-	(68,460)
Տոկոսային ծախս		67,356	3,802	71,158
Հաշվեկշռային արժեք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8, 10	645,811	34,546	680,357
Մայր գումարի մարում		-	(10,571)	(10,571)
Տոկոսագումարի մարում		-	(3,581)	(3,581)
Չուտ օգուտ անտոկոս փոխառությունների սկզբնական ճանաչումից		(88,241)	-	(88,241)
Տոկոսային ծախս		70,233	3,581	73,814
Հաշվեկշռային արժեք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8, 10	627,803	23,975	651,778

25. Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և որ Ընկերությունն ապահովում է ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Կապիտալը բաղկացած է բաժնետիրական կապիտալից, չբաշխված շահույթից և կապիտալի այլ տարրերից:

ՀՀ Կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում է վերահսկում է կապիտալի պահանջները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազեյան համաձայնագրի սկզբունքների վրա, ներդրումային ընկերությունները պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի մեծությունը և կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը բարձր լինի սահմանված նվազագույն

(հազար ՀՀ դրամ)

մակարդակից: ՀՀ Կենտրոնական բանկը ներդրումային ընկերությունների համար սահմանել է 300,000 հազար ՀՀ դրամ նվազագույն ընդհանուր կապիտալի և 1,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալի պահանջ, իսկ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի նվազագույն մակարդակը՝ 12%: 2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը համապատասխանում է կապիտալի նվազագույն պահանջներին և այլ պահանջներին՝ սահմանված ՀՀ ԿԲ կողմից:

26. Պայմանական պարտավորություններ

ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս հասանելի չեն: Ընկերությունը չունի իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական վարույթներ

Ղեկավարությանը հայտնի չի Ընկերության դեմ որևէ նշանակալի դատական վարույթ:

գ) Հարկում

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ:

Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են Էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: